ՊԱՅՄԱՆՆԵՐ

Արշավի անվանումը՝ **Փոխանցումներ Visa քարտերի միջոցով**

Visa-ն Հայաստանում Visa քարտերի քարտապանների համար իրականացնում է Արշավ, համաձայն որի Հայաստանում գործող բանկ-գործընկերների կողմից թողարկված Visa քարտերի քարտապանները կարող են ստանալ հետվճար (քեշբեք) սույն փաստաթղթով սահմանված պայմանների համաձայն (այսուհետ՝ «Պայմաններ»)։
Սույն Պայմաններին համաձայնելով Դուք հայտարարում եք, որ ծանոթացել եք Պայմաններին նախքան Visa քարտերով փոխանցումներ կատարելը, ինչպես նաև ընդունում եք ստորև ներկայացվող բոլոր պայմանները։
Մենք իրավունք ենք վերապահում ժամանակ առ ժամանակ վերանայել սույն Պայմանները։ Խնդրում ենք պարբերաբար վերանայել Պայմանները՝ փոփոխությունների հետ ծանոթանալու նպատակով։ Մենք որևէ պարտավորություն չենք կրում Ձեզ նախապես ծանուցելու Պայմաններում ակնկալվող փոփոխությունների մասին, իսկ Դուք համաձայնում եք, որ Արշավին մասնակցում եք բացառապես սեփական ռիսկով։

1. <u>Արշավի նկարագրությունը</u>

Եթե Դուք հանդիսանում եք սույնի 6-րդ կետով նախատեսված բանկ-գործընկերներից որևէ մեկի կողմից թողարկված Visa քարտի քարտապան, Դուք կարող եք ստանալ 1000 ՀՀ դրամի չափով հետվճար (քեշբեք), եթե՝

a. Դուք կատարում եք դրամական փոխանցում Ձեր Visa քարտից ցանկացած այլ Visa քարտի դեպի արտասահման,
b. Դուք ստանում եք դրամական փոխանցում արտասահմանից ցանկացած Visa քարտից Ձեր Visa քարտի վրա ։

Արշավին կարող են մասնակցել ցանկացած տեսակի Visa քարտերի քարտապանները, առանց բացառությունների։
Դուք իրավունք ունեք ստանալ հետվճար (քեշբեք) բացառապես Visa քարտերի միջև փոխանցումների կատարման դեպքում «Փոխանցումներ Visa քարտերի միջոցով» ծառայության շրջանակներում։

2. <u>Հետվճարի (Քեշբեքի) ստացումը</u>

Դուք կստանաք հետվճար (քեշբեք) սույն Պայմանների կետ 1-ի «ա» և «բ» ենթակետերից յուրաքանչյուրի շրջանակում իրականացված միայն առաջին գործարքի համար։ Տարընկալումներից խուսափելու համար խնդրում ենք նկատի ունենալ, որ հետվճար (քեշբեք) հասանելի է բացառապես Visa քարտերի քարտապանների համար։
Դուք կստանաք հետվճար (քեշբեք) բացառապես եթե ակտիվացրել եք «Փոխանցումներ Visa քարտերի միջոցով» ծառայությունը Արշավի գործողության ժամկետի ընթացքում, այն է 2021 թվականի ապրիլի 26-ից հունիսի 26-ը ընկած ժամանակահատվածում։
Հետվճարը (քեշբեքը) ենթակա է վճարման այն նույն հաշվին, որից Դուք կատարել եք կամ որի վրա Դուք ստացել եք դրամական փոխանցումը։
Հետվճարը (քեշբեքը) Ձեզ կվճարվի Ձեր բանկի կողմից համապատասխանաբար այն ամսվա ավարտից հետո 10 բանկային օրվա ընթացքում, որի ընթացքում Դուք կատարել եք կամ ստացել եք դրամական փոխանցում։

3. **Փոխանցման իրականացումը**

Արշավի շրջանակներում փոխանցում կատարելու համար Դուք պետք է հավաքեք քարտի 16-նիշանոց համարը, ինչպես նաև ստացողի անուն, ազգանունը: Visa քարտերի միջոցով փոխանցումներ կատարելու վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև տեղեկանալու համար, արդյոք Ձեր բանկը տրամադրում է Visa քարտերով արագ փոխանցումների ծառայությունը, Դուք պետք է դիմեք Ձեր բանկ:

Դուք կարող եք կատարել փոխանցում Ձեր բանկում հասանելի եղանակներից որևէ մեկով, որոնք կարող են ներառել հետևյալները.

a. Ձեր բանկի բջջային հավելվածի միջոցով փոխանցում;
b. Ձեր բանկի ինտերնետ- բանկինգի միջոցով փոխանցում;
c. Ձեր բանկի մասնաճյուղերում կատարված փոխանցում:

Visa քարտերի միջոցով փոխանցումներ կատարելու դիմաց Ձեր բանկը կարող է սեփական հայեցողությամբ սահմանել միջնորդավճարներ ինչպես Հայաստանում, այնպես էլ դեպի արտասահման կատարվող փոխանցումների համար: Բացի այդ, համաձայն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև բանկի ներքին կանոնակարգերի, Ձեր բանկը կարող է փոխանցումների համար սահմանել որոշակի սահմանափակումներ, սահմանաչափեր և այլ չափանիշներ: Ձեր բանկի կողմից կիրառվող միջնորդավճարների չափի, սահմանափակումների և այլ մանրամասների մասին ամբողջական տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել Ձեր քարտը թողարկած բանկին:

4. **Բացառություններ**

Արշավին չեն մասնակցում այն փոխանցումները, որոնք կատարվում են ապրանքների առուվաճառքի, ծառայությունների ձեռքբերման, ինչպես նաև վարկերի մարման շրջանակներում: Արշավի շրջանակներում բոլոր փոխանցումները պետք է կատարվեն ֆիզիկական անձանց պատկանող քարտերին:

5. **Արշավի ժամկետները**

Արշավն իրականացվում է Visa քարտերի քարտապանների համար 2021 թվականի ապրիլի 26-ից մինչև հունիսի 26-ը (2 ամիս), որոնք ակտիվացրել են «Փոխանցումներ Visa քարտերի միջոցով» ծառայությունը:

Visa-ն կարող է, սեփական հայեցողությամբ, երկարաձգել կամ կրճատել Արշավի ժամկետները: Համապատասխան փոփոխությունները կարտացոլվեն հետևյալ կայքում՝ https://cis.visa.com/ru_TJ/visa-in-armenia/promotions/visa-direct.html և սույն Պայմաններում:

6. **Բանկ - գործընկերները**

Հայաստանում Արշավին մասնակցում են հետևյալ բանկ-գործընկերները՝

1. ԱԿԲԱ ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ
2. ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
3. ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
4. ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ ԲԲԸ
5. ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ
6. ԷՎՈԿԱԲԱՆԿ ՓԲԸ
7. ԱՅԴԻԲԱՆԿ ՓԲԸ

8. ՅՈՒՆԻԲԱՆԿ ՓԲԸ
9. ԻՆԵԿՈԲԱՆԿ ՓԲԸ

Դուք կարող եք մասնակցել Արշավին բացառապես եթե Ձեր Visa քարտը թողարկվել է բանկ-գործընկերներից որևէ մեկի կողմից: ՀՀ-ում գործող այլ լիցենզավորված բանկերը չեն մասնակցում Արշավին: Բանկ-գործընկերների արդի ցուցակին ծանոթանալու նպատակով խնդրում ենք պարբերաբար վերանայել սույն Պայմանները:

7. **<u>Պատասխանատվություն</u>**

Մենք պատասխանատվություն չենք կրում Արշավի շրջանակներում Ձեր բանկի կողմից Ձեզ հասանելի հետվճարի (քեշբեքի) չվճարման համար: Համաձայն սույն Պայմանների՝ Դուք համաձայնում եք ազատել մեզ ցանկացած տեսակի պատասխանատվությունից: Միաժամանակ, Դուք համաձայնում եք, որ հետվճարի (քեշբեքի) չվճարման հետ կապված բոլոր պահանջները պետք է ներկայացվեն Ձեր Visa քարտը թողարկած բանկին: Խնդրում ենք ծանոթանալ բողոքների ներկայացման կարգին Ձեր բանկի կայքում:

Թարմեցված՝ 21.04.2021 թվական